

ԽԱՅՈՒՆԱԿԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍՐ

Ա. ՏԱՐԻ

15 ԱՊՐԻԼ 1912

ԹԻԻ 13

Խմբագրապետ
Մ. ԻՓԵՔՃԵԱՆ

Արտոնագր
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոքր Հայացիներուն
Գրեթեպիկն զրոյցներ (բանաս.)
Միութիւնը գործնական կեանքի մեջ
Միտապո (քաղաքան.)
Մեր գաւառներուն վերածնութեան հաւեակ ազդի.

ԽՄԲ.
ԱՐՄԷՆ-ԵՐԿԱԹ
Գ. ՍԵԻՅԵԱՆՅ
ՅՈՎՀ. ՄԵՂՄՈՒՆԻ
ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

Գաւառային Լուրեր

ՎԵՐՋԻՆ ԱԶԴ

ՄԵՂ ԲՈՎԱՆ ԲԱԺՎԵՐՈՒՆԵՐՈՒՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Թերեքս իր առաջին վեցամսեան լրացնելով Բ.ին կ'սկսի. Տա'աւին կը գտնուի
անցյալի անհասներ որ հակառակ մեր յայտարարութիւններուն. մինչեւ 11րդ. թիւը
ստանալէ յետոյ կ'ելնեն քերք եւ կը վերադարձնեն, ասկէ վերջ այդպիսիներուն անուն-
ները առանց բացատրութեան պիտի հրատարակենք. Նաեւ «պատժոյ» սիւնակ մը պիտի
բանանք այն բաժանորդներուն ու գործակալներուն, որոնք մինչեւ 15րդ. թիւը ստա-
նալը իրենց բոլոր հաշիւները չեն մաքրեր:

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ԵՒ ՆԱՐՏԸՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزته سی مدیریته

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսաանկախ հանդեսի-Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, թուրքերէն եւ հայերէն
քաժիններով: Թուրքերէն քաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու քաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
սարեկան 24 թիւ պիտի տրուի:

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա սարեկան 1 մեհիս
» վեցանկայ 0.50 »

Արսասահանան սարեկան 5 ֆր.
» վեցանկայ 2.50 »

Բաժնեգիրք բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար ա-
ռանձին նշանատուր սրբանամներ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ նուէր:

Լոյս տեսաւ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ Օրաթերթը

ՔԱՂԱՔ՝ԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԿԻՍՏԱՊՈԼԻՏՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՆ Ս. Դ. ՀԵԶԱԿԵԱՆ

ԿԻՒՍՏԱՆԻՑՈՒԹԵԱՆ

Պիտի աշխատակցին Հնչակեան 15 է պուրի մատուցական կարող ոյժեր, որոնք իրենց
հեղինակաւոր արտադրութիւնովը ծանօթ են հրապարակի ներկայ կարեւոր խի՛ւս կա-
րեւոր պակաս մը լրացնելու սահմանուած է: Կը թելադրենք բոլոր ազգայինները որ ձգ-
տուին, անոր ունենալիք նոյն ու գիտական բովանդակութեան:

Պայմաններ՝ Պոլսոյ եւ Գաւառներու համար սարեկան 80 դր.

վեցանկայ 45 »

եռամսեայ 25 »

Հասցե՝ Վարչութիւն «Նոր Աշխարհի»

Կ. Պոլիս Բնար, պէհար փողոց թիւ 20

ԴԱՅԼԱՅԼԻԿ

Գեղարուեստական կիսամսեայ.

Տէր եւ Տօրէն Հմայեակ Արամեանց: Հասցե՝ Կ. Պոլիս բօսարկոյ թիւ 125:

Դալլայի իւրաքանչիւր թիւը պիտի բաղկանայ 60 էջերէ, 30 պատկերով, 30 նո-
թաներով եւ բազմաթիւ երգերով: Դալլայի թիւն պատկան է խնամով հաւաքել, ամփո-
փել, ձայնագրել եւ հրապարակել Յելաթիօթական, Սօցիալիստական, Ազգային, Միջազ-
գային եւ ժողովրդական հասրնիք երգերն ու դիւցազներգութիւնները, որոնց հեղինակ-
ներուն պատկերներն ալ պիտի հրատարակուին, ինչպէս նաեւ անոնց՝ որոնց ձօնուած են
երգերը: Ա. թիւը յոյս պիտի տեսնէ 1942 Վարսի վերջերը: Բաժնեգիրքն է սարեկան (20
թիւ) 20 եւ վեցամսեայ 13 դր. Բաժանորդագրութիւնն անպայման կանխիկ է: Կը յանձ-
նարարենք բոլոր գեղարուեստաւորներուն:

ԽԱՅԿԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ԱՊՐԻԼ 1912

ԹԻԻ 13

Խմբագրական

ՓՈՔՐ ՀԱՅՔՑԻՆԵՐՈՒՆ

Գառաւի վերածնունդի գործին մէջ կրթական հաստատութիւններու աւագ դերն ընդունուած իրականութիւն մըն է: Դարձեալ կրթական հաստատութիւններու մէջ՝ պատրաստուած, վարժապետանոցներու մէջ մանկավարժական ու հոգեբանական հմտութեան արագացող ճշմարիտ մշակներու չի կենալ ա՛յլ ոչ ոք ծածկուելիք երեւոյթներէն չէ: Իսկապէս գաւառացիներուն համար մեծ գոբախտութիւն մըն է վարժապետանոցի չ'գոյութեան պատճառաւ, որքէն իսկ ընտանեկան կրթութիւնէ դուրկ, իրենց զաւակները երբ յանձնելու հաւկին տակ կը գտնուին՝ իրենց կոչումին ու դաստիարակութեան պահանջներուն հմուտ չ'եղող անձերու, իբր ուսուցիչներու կրթիչներ:

Գիտակից ծնողքի մը համար իրաւամբ չատ դժուարէ, տեսնել՝ պարագաներու տախտակահանութեան տակ, իր ընտանիքի ապագայ նեցուկին՝ զաւակին բարոյական, մտաւորական ու ֆիզիքական նկարագիրը կազմելու համար յանձնուած ըլլալը, այսպիսի մէկուն, ո՛ր ինք չունի բարոյական մաքուր ունեցեալ, մտաւորական առողջ պաշար, և ուսուցիչ ըլլալու ունէ յարմարութիւն ալ սիկառը ձեռքը յետեւած գաւազանի ոյժին կը խամբեցնէ մատաղ աշակերտին մէջ զարթնել սկսող գիտակցութիւնը, բողոքի ոգին և մարդ ըլլալու բոլոր պայմանները:

Գառաւի կրթական հայ հաստատութիւններու մէջ գոբախտաբար պակաս

չեն այդպիսներու թիւը: Ամէն գաւառ տարուան ընթացքին կ'ունենայ իր ուսուցչական և դպրոցական պայքարները, թէև անոնցմէ մեծադոյն մասն աղայակէն էնթոխներու, կուսակցամիտական շարժումներու: Երկրիսը են, սակայն նուազ չեն նաև իրական ու արդարացի պատճառներով ուղուած պայքարներն ու հանուած բողոքի և յները: Ճատ անգամ ժողովուրդեան՝ դիտակիյ ու կրթական գործերը տեղեակ և անոնց աւագ ու նուիրական կնարեւորութիւններն ընդունող մէկ մասը՝ կրթական հաստատութիւններու ապիկար ձեռքերու յանձնուած ըլլալը տեսնելով կը բողոքէ և կը ջանայ աւելի կարողներու յանձնելու համար պայքարել, թէև շատ արգաս: Եյս պայքարները սուր հանգամանք տառնալով պառակտումի կը վերածուին: Ինչէ այս ամենուն պատճառը.— Բարեխճութեան պակասը.— Թէ ինչպէս այս Դպրոցական տարեշրջանը կը վերջանայ հրաժարողներ ու հրաժարեցուցուածներ կ'ըլլան. ամէն դպրոց ուսուցիչներու պէտքը՝ կ'զգացուի, մօտաւոր ու հեռաւոր գաւառներ բարեկամներու ու ծանօթներու կը դիմուին որ պահանջուած ուսուցիչները ճարեն: Ժամանակը կը նեղնայ. հեռագրական բանակցութիւններու կ'սկսուին. վերջապէս դպրոցները կը բացուին, շորեկուսուցիչները գործի կը ձեռնադրեն, աւագ, ըսուած ու գրուած կարողութիւնն ու վարձադիտութիւնը չունին անոնք, խարուերեն վերագաս, պաշտօնեութիւնները, որովհետեւ իրենց ծանօթ ու բարեկամ կարծած մարդուն որ դիմած էին անոնք ալ՝ ջանացած են իրենց աւելի մօտ բարեկամները տեղաւորել անբարեխճօրէն: Մենք մեր աչքերովն իսկ տեսած ենք այսպիսի ցտալի պարագաներ որ որտի խոր դանձութեամբ դիտած ենք, իբր ճիւղացին անբարեխճութիւններու Խոշոր ամուսականներով բարձր պաշտօններու ուղարկուած են այնպիսի ուսուցիչներ, որոնք հասարակ ուղղագրութեան իսկ անտեղեակ էին զժրջարտարար:

Խմբագրութիւնս, իր մէկ նիստին այս ախոր ու վնասարեր կայութիւններն նկատի առնելով, երկար խորհրդակցութիւններէ յետոյ, թէև իւրաքանչիւր ուսուցիչ իր կարողութեան հաշիւապատասխան դիւրին մէջ գնելու ուղեց անմիջականօրէն փոքր հայքի ուսուցիչ սիւսթեան մը կազմութեան ձեռնարկելով: սակայն յառաջ գալիք դժուարութիւններ և դպրոցական նոր ջրմանին խիստ մօտալուտ ըլլալը նկատի առնելով փոքր իջածէ այդ խոր վերջին դարման տարած ըլլալու գոհունակութիւնը վայելելու համար որոշեց փոքր հայք Աղզ. վարժարաններէն իրեն դիմողներուն քառմարագոյն ուսուցիչներ ուսուցչուհիներ ու մանկապատիգ պանուհիներ հայթայթելու պատասխանատու գործը տառնանել միմիայն բարոյական վարձատրութեան մը փոխարէն:

Արդ, փ. Հայքի բոլոր կրթական Աղզ. վերագաս մարմիններն եթէ կը փափաքին ունենալ իրենց փափաքած ուսուցիչներն ու ուսուցչուհիներն ու մանկապատիգ պանուհիները, նոյնպէս այն բոլոր կրթական պաշտօնեաներն որ կը փափաքին մեր միջոցաւ գործ գտնել թող դիմեն Խմբագրութեանս

բա
էջ.
սա

ռա

բլ

հեղ
հեւ
սու
դբա
փե
գու
նե
եղ
քի
նա

այժմէն և լսեալկյոթիսն մանեն սիրո հետ Թէ պայտօնական մարմիններ
և թէ կրթական պաշտօնեաներ թերթիս կողքին վրայի պայմաններուն ու
շաղկապութիւն սրտախն ընծայել:

Խմբագրութիւնս Փ. Հայքի շրջանէն դուրս գտնուող շրջանակներէ ալ
եթէ գիմններ ըլլան, անոնց ալ գոհացում տալու ջանքը չի պիտի ինայէ:

Խմբագրութիւնս իր ստանձնած գործերուն համար նիւթակցն ուէ վար-
ձաւորութիւն չի պիտի ակնկալէ: Հետեաբար կոչ կ'ընենք բոլոր Փ. Հայքի-
ներուն որ եթէ կը դնահատեն մեր այս ստանձնել փորձած ծառայութիւնը
թող փութան առիթէն օգտուել, որովհետեւ կը խորհնք թէ կրթական յար-
կերս մէջ տեղի տնայող կարգ մը անախորժութեանց առջև այս միջոցաւ
պիտի կրնայ առնուիլ:

ԽՄԲ.

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԶՐԱՅՑՆԵՐ

Հիւանդ կուրծքս է բաց աւտոս գիշերին,
Լուսնակն է ինկեր
Փոքրիկ սենեակիս նեղ պատուհանին.
Զեմ կրնար երգիլ

Ինչպէ՞ս կ'երգէի երբ հոգիս մեզ
Երազներ կային,
Երբ շա՛տ հեռուօր յոյս մ'հոգիս անվերջ
Կը յանձնէր բոցին...

Ա՛յ չի գար հիւանդ կուրծքս բաղխելու
Երազ մը գողցիկ,
Եւ յոյսես ահա՛ կ'երթան շա՛տ հեռու,
Հրաւազե՛ղ, հեղի՛կ...

Ա՛յ ես անոնց դեռ ընց քալ կ'ուզէի,
Կ'ուզէի լրսել
Քու զբոսներդ միշտ հրաւալի.
Ի՞նչ անհուն գիշեր՝

Որ կուգաս նորից սանձուած հոգիս,
Ինչո՞ւ չեմ տղար
Բոլոր երազներս՝ որոնք խեղճ սիրիս
Բոց քալ չեմ կրնար...

Բայց եկու՛ր, եկու՛ր փութով եկու՛ր գունդ,
Կ'ուզեմ քեզ սիրել,
Եւ բանալ կուրծքս ժրպսող աստղերուն,
Ո՛վ արժար գիշեր...

Զբոսներդ հե՛տ հոգիս փութա՛յ,
Սիրել չեմ կրնար,
Որովհետեւ ա՛յ յոյսես երեկայ
Սիրսիս բոց չեմ տար...

Որովհետեւ ա՛յ խորհուրդդ քրժողն,
Աննրման գիշեր,
Միշտ մեղամաղձոս երգն է իմ հոգւոյն,
Կ'ուզեմ երազել...

ԱՐՄԵՆ - ԵՐԿԱՅ

ՄԻՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Յետագարձ տխարկով մը կարելի կ'ըլլայ տեսնել թէ անցեալին մէջ գործի և արհեստի մարդեր, միութեամբ շահելու օգտաւէտ ձեռնարկը երբէ՞ք ունեցած չեն Ամասիոյ տաւարական հրապարակին վերայ: Միայն մէկ երկու անյաջող փորձեր ըրած են արևելի գործարանատէրերն ու մտազորք արհեստաւորներ:

Գործի մէջ միութեան օգուտները անքան բազմապիսի ու աչքառու եղած են օտար երկիրներու մէջ որմէ բնական և միանգամայն պարտաւորիչ էր օրինակուել մեր արտադրող և սպառող դասակարգերուն համար:

Թուրքքիոյ մէջ, ուր առաւելապէս գործի ու արհեստի ընդունակութիւն ցոյց կուտանք մենք հայերս, կ'արժէր որ միութեամբ և ընկերակցական գործունէութեամբ մը վարէինք մեր գործերը, կարենայ ձեռք բերելու համար համեմատական արդիւնք մը: Ամերիկայէն վերադարձող շատ մը ծանօթներ է կը լսենք թէ այդ երկրին մէջ գոյութիւն ունեցող գործատուները, վաճառատուները առհասարակ ընկերութեամբ կը շահագործուին: Հոն, այդ կարգի հաստատութիւններէն շատեր *compagne* բառը կը կրեն իրենց ճակատին վրայ: Այլ սովայն, մենք փոխանակ այդ երկրին և բովանդակ եւրոպայի ունեցած հակայաքայլ առաջդիմութեանց գաղափարներ: Ուսումնասիրելու ետէ ըլլալու, կը բաւականանանք միայն տնտեսք վրայ զարմանալով: Անոնք իրենց շահու աշխատանքները անհատապէս հիմերու վրայ խորոխած և տնօրինած են այնպիսի տնտեսագիտական սկզբունքային օրէնքներ որոնցմով գնորդի և վաճառողի փոխադարձ փոփոխութիւն մը ստեղծուելէ զատ շահու և առեւտրական սխալէմաթիք եղանակաւորումով մը կը փայլի հրապարակը:

Բայց ընդհակառակը մենք առանձին ա-

ռանձին գործառնութիւնով զիրար գլխու, իրարմէ աւելին շահելու մասնաւոր դիտումներով մեր գործերուն տուած ենք այնպիսի անստոյգ հանգամանք մը ինչ որ յայտնի անվստահութիւն մը ծնցուցած է սպառող տարրին մէջ, և թէ երկուստեք նպատաւոր չէ եղած տնտեսական կեանքի բարւոք մաստկարարութեան տեսակէտէն:

Թերեւս աւարկուի թէ առանձին չի գործելը, իրերօգնութեամբ գործ շարունակելը անհատի մը ինքնավստահութեան պակաս կ'ենթադրէ, մարդ երբ գործելու խելքն ու կարողութիւն ունի, կ'արժէ որ առանձին աշխատի առանձին տէր ըլլայ իր ձեռքովը իսկ շահածին: Բայց մենք չենք ըսեր թէ իր գործը զարգայնելու համար չ'ըլլմէ մէկը ամէն նպատաւոր հետաքրքրութիւններու: Մենք կըսենք, գործին, աշխատին գործի մողեր, բայց գործելու եղանակին մէջ կէտ նպատակի ունենան միութիւնը, նկատելով որ հոն կը կայանայ իրական յառաջդիմութիւնը առաջադրեալ սէէ տապալէզի մէջ:

Միութեամբ կարելի է մտնայ առեւտուրի մէջ ի գործ դրուած էնթրէկները, շահագործութեան նպայի մէջ յերկրուած սուտերն ու կեղծիքը, չորդողութիւն ընդհանուր սովորութիւնէն գերուած սորկական այն ոգին որով կ'ապականուին նկարագիրները և կը զժուարմանայ առեւտուրին մէջ անյողողող քայլերով առաջանալու ամէն միջոց:

Պէտք է, սակայն, որ այս մտախ աշխատին գաւառի ամէն կեղրոնի մէջ գտնուող կուտակցութիւնները և ասոնց բացակայութեան արհեստաւորներու ու վաճառականաց հասուն ու բռնիմաց տարրը: Ամէն արդիւնաւոր գործ բնական է կուսենայ իր առաջնորդողն ու թելադրողը: Կուտակցութիւններ պէ՛տք է որ գծին ընկերակցական, արհեստակցական լուրջ

բա
էջ
սա

ռա

թ

հեղ
հե
սուբա
փե
գալ
նեղ
եղ
բի
նա

օրէնքներ, ընկերութեան մը մշտատեւ շա-
րունակութեան հաւատարմութիւնը ներշնչող
ծրագիրներ և մզեն ժողովուրդը ատոր

Ամասիա

ճշմարիտ գործադրութեան, և գրչի ու խօս-
քի մարդեր նոյնպէս զերծ չեն այս մասին
իրենց զոհաբերումն ունենայ է.:

Գ. ՍԵՒՈՅԵԱՆՑ

Մ Ի Ի Ա Պ Օ

ՊԻՆԷՕՆ ԾՆԱԾ՝ 1749 ԻՆ ԵՒ ՄԵՌԱԾ՝ 1791 ԻՆ

Սա Ֆրանսական յեղափոխութեան սմեկեկ նշանաւոր ստեղծարարն էր: Երբ պետական
սեփականութիւններ հաւաքուած էին խորհրդարան դրան հայրապետ համար պետութեան,
գոր թագաւորութիւնը պէտք սեփականութեան տեղունող թագաւորութիւն էր, Միտայօ գիրքը զոր-
ունելու համար ներկայացող թագաւորի պատուիրակներուն հետեւալը յայտարարեց. «Մենք
հոս եկած ենք ժողովարդին կամքով և ո՛չ թէ թագաւորին. այս տեղէն ստիճաններու իջնու-
նդարներ միայն կրնայ մեզ ցրուել»: Ան շատ աշխատեցաւ թարեւջել պետութիւնը: Ոնոր-
նրդակցական հաւաքոյթի մը մէջ ըստ. «Մենք կը պարտինք յարգել յոյսը այն յոսնակա-
ւորութիւնները, զորս Ֆրանսայի համար ստեղծեալ ենք»:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՖՌԱՆՍԱՅԻ ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ելեմտական նախարարութիւնը ձեզ
չ'նկրկայացուց մեր այժմեան կազմութեան
վարչութեան պատկերը, ձեզ չ'ըստէ թէ օր-
ունն մը, ժամանակ մը կամ վայրկեանի մը
յայտարարութիւն պիտի փութայն է վտանգը,
ոյ կրնայ մահացու դառնալ:

Ո՛հ, եթէ անշուք յայտարարութիւններ
չ'երաշխաւորէին հանրային հաւատքին
հոնդէպ մեր ակնածանքը, ինչպէս նաեւ
մեր սարսափը անանկութիւն կոչուած ու-
նարգ բառին դէմ՝ եւ պիտի համարձակէի
հետազօտել մեզի ու՛, անծանօթ դարձած
անոր թաքուն պատճառները: Ասոնք են
որ անխոհեմարար ընկրկել կուտան մեզ
մինչև ապահովարար անաղղկեցիկ անձնու-
նրութեան գործ մը հաշակելու վայրկեա-
նը, զոր եթէ փութացուցած չըլլալով իս-

կապէս անտեսենք՝ եւ իմ խօսքս ուղղե-
լով ամեն տնտես, թերեւ հաշտ են հան-
րային յանձնառութիւններու մէջ թերա-
նալու գաղափարին հետ՝ չափաւանցօրէն
ճայրայեղ վախով մը կամ տուրքի սար-
սափով՝ պիտի ըսեմք թէ ինչ է ուրեմն
անանկութիւնը, եթէ ոչ տուրքերու ամե-
նէն դժողակը, ամենէն ապօրինին, ամե-
նէն անհաւասարը և ամենէն աղէտային:
Բարեկամներս, մտիկ ըրէք բոտի մը,
միտի բոտի մը:

Աւագակութեան և ապականութեան
երկու դարերը փորած են անանկութեան
այն խրամաւոր, ուր կայսրութիւնը մը-
խըրճուելու մօտ է: Պէտք է գոյել այս
ստեղծարար խորհորատը: Լաւ ուրեմն, ա-
հաւատիկ փոփոխացի կալուածատէրներու

ցույցակը, որուն մէջէն ամենէն հարուստ-
ները յնարեցէք՝ նուազ քաղաքային
զոհելու համար: Ընտրեցէք, միթէ պէտք
չէ՞ ժողովրդային զանգուածը փրկելու հա-
մար փոքրամասնութիւն մը զոհել: Արդ,
նայեցէք թէ այս երկու հազար անուանի
դրամատէրները ինչպէս կրնան պետական
այս բացը գոցել: Ձեր ելեմուտքին մէջ
կարգ ու կանոն հաստատեցէք, ինչպէս
նաե խաղաղութիւն ու բարեօրո՞ւ պե-
տութեան մէջ: Զարկէ՞ք, անդթութեամբ,
խեղդեցէք այս տխուր զոհերը, գահավի-
ժեցէք զանոնք խորխորատը, որ գոցուի
անմիջապէս: Ի՞նչ, սարսափէն կ'ընկեր-
կի՞ք, դուք՝ անհեռատես մարդիկ, դուք՝
վեհերոս մարդիկ: Չէք տեսներ որ սը-
նանկութիւն յայտարարելով և կամ զայն
առանց հրապարակելու անխուսափելի
դարձնելով. ինչ որ ամենէն ահելին է,
դուք կ'արատաւորուիք հազար անգամ
աւելի եղեռնաւոր գործով մը, որ անընչ-
մայրիկ և ձրի ոճի մըն է պարզապէս:
Այս ստեղծի բացը վերջապէս անձնագո-
հութիւնը միայն պիտի գոցէ: Բայց կը
խորհի՞ք որ դուք բան մը պիտի չի վճա-
րէք անոր համար որ ոչինչ կը պարտիք:
Կը կարծէ՞ք թէ հաղարտւոր, միլիոնաւոր
մարդիկ, որոնք անանկութեան աղետալի
պայթուիին կամ անոր հակահարուածին
հետեանքով վայրկենի մը մէջ պիտի կոր-
անցնեն ինչ որ իրենց կեանքին միսթա-
րութիւնն էր և կամ թերեւ իրենց ապ-
րուստի միակ միջոցը, ձեզի պիտի թո-
ղո՞ւն որ հանգարտորէն վայելէք ձեր ու-
ճիրը:

Դո՛ւք՝ անտարբեր հանդիսատեսներդ
անհաշուելի չարիքներուն, զորս ազէտը
Ֆրանսայի գլխուն պիտի ժայթքեցնէ,
դո՛ւք՝ անզգայ եսամոլներ, կը հաւատա՞ք
որ յուսազրկումի ու տուայտանքի այս
ցնցումները ուրիշներու նման պիտի անց-
նին: Ո՛չ: Անոնք տեղի պիտի ունենան
այնքան աւելի արագ, որքան աւելի բու-

ռն: Վաջայոյն էք միթէ որ առանց
հայի մնացած այնքան մարդիկ պիտի
թողուն ձեզ՝ որ ճաշակէք այն բազմա-
տեսակ և համալում կերակուրները, որոնց
ոչ թիւը և ոչ ալ համեղութիւնը պիտի
ուզէիք պակսեցնել «Ո՛չ» Դուք պիտի կոր-
սուիք, համաշխարհային հրդեհին մէջ,
զոր դուք չպիտի վախնաք արծարծելէ,
ձեր պատուոյ կորուստը ձեր անպիտան
վայելքներէն և ո՛չ մէկը պիտի ազատէ:

Ահաւասիկ այն, որուն մենք կը դի-
մենք... ես կը հասկընամ ձեր խօսքը,
եռանդն ու կանչումը հայրենասիրութեան
հանդէպ: Մի, մի՛ աղարտէք հայրենասի-
րութիւն ու հայրենիք բառերը: Ամէն
մարդասիրական ճիշդ եկամուտէն բաժին
մը տալն է՝ իր ստացուածքին տիրանա-
լու համար: Պարմենիս սա մաթիմատի-
քական պարզ հաշիւ մըն է: Ով որ կը
վարանի, կրնայ զինթոթով ընել միայն
տհաճութիւնը անարդանքով մը որ իրեն
ուզուի կը պարտի ներշնչել: Այո՛,
պարմենիս, այն բացը գոցելու համար
հանգանակութեան ձեռնարկելը ամենէն
տարրական խոհմութիւնն է, ինչպէս
նաե ամենէն հասարակ խնայողութիւնը:
Ձեր ամենէն մեծ չահը այս է զոր ես
կ'անկարկեմ: Մտիկ ըրէք սա նշանաւոր
խօսքը որ ուրիշ առեն ըսած չեմ. «Յոյց
տուէք ինծի ազգերու ամենէն առաջնա-
կարգները կամ ժողովրդային հատուած
մը, որոնք հաւաքուած ըլլան հանրու-
թեան հաւատքին զէմ թերամուտ հա-
մար»: Ուրիշ մըն ալ պիտի ըսեմ. «Ա-
զատութեան մասին ի՞նչ տխուր պիտի
ունենայիք, որ միջոցները ձեզ պիտի թե-
լաղրէին զայն ընձեռելու համար, եթէ ձեր
առաջին քայլովն իսկ ամենէն ապական-
ուած կառավարութիւններու ստորնու-
թիւնները կը գերազանցէք»: Աւելի խօսք
մը ևս մէջ պիտի բերեմ. «Դուք բոլորովին
համաշխարհային փճացման մէջ մխրճուած
էք, անձնաւրացութեան նախաձեռնարկը,

զոր կառավարութիւնը ձենէ կը պահանջէ, զուրք էք նոյն ինքն»։ Քուէարկեցէ՛ք ուրեմն զրամական այս արտակարգ նուիրատուութիւնը, որ պիտի կրնայ մնանկութիւնը դարմանել։ Քուէարկեցէ՛ք զայն։ Իսկ եթէ ատոր միջոցներուն վրայ տարատա՛մ և անհեթեթ կարծիքով մը կ'երկրայիք, զուրք չպիտի կրնաք ոչ այն ծայրայեղ տուրքը անմիջական վկայելու մասին վստահել և ոչ ալ մէկ կարողութիւնն։ Քուէարկեցէ՛ք, որովհետեւ հանրային դէպքերը յապաղում չեն վերցնել։ Զղուշացէ՛ք ժամանակ պահանջելէ։ Դժբախտութիւնը ժամանակ չտար։ Պարոններ, ծիծաղելի ապստամբութեան խօսքը հիւանդոտ երեւակայութիւններու մէջ միայն տեղ ունի։ Դուք արդէն ատենօք լսած էք Կիկերոնի սո խրոխտ բառերը. «Կոտեկինա հոտի մի պատենէն երուն առջև է, և զնոնք կը վիճարանին»։ Ամէն շուրջը, լսութեան ժամանակ, ոչ Կոտեկինա, ոչ այնքան վտանգ, ոչ ապստամբութիւն և ոչ ալ հոռված կայ։ Բայց այսօր կայ քառմեկի մնանկութիւն մը որ ձեր կեանքին, ձեր սերակա՛նութեան, ձեր պատիւին կապուեալ է, և զուրք դեռ կը վիճարանիք...։

Թարգմանեց՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԵՂԱՄՈՒՆԻ

ՄԻՌԱՊՈ

ՄԵՐ ԳԱԻԱՌՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՔԱՌԵԱԿ ԱԶԴԱԿՆԵՐԸ (ՊՊՐՈՅ)

I

Այսօր մեր երկիրը վերածնութեան խորհրդաւոր շրջանին մէջ իր գոնուի։ Պաշտօնը կը համարիմ «Ամառիա»-ի թըրթրութեան էջերուն մէջ, որուն մասնաւորականութիւնը զբաղեցնող իր բնականութեան խնդիր, թուել մեր գաւառներու վերածնութեան հառեակ ազգակներ, որոնք եթէ գաւառացի բնակիչներուն մէջ արձագանգ գտնեն, ինձ համար բարոյական վարձատրութիւններ պիտի ըլնան։

Հանրածանօթ է գաւառի թշուառ կեանքը, ուր մարդկային արժանապատուութիւնը բանաւոր գաղթեալ ոտից տակ առաթուր եղած՝ ինչպէս անցեալին մէջ և ներկայիս ալ՝ կը ներկայանայ զգուշի տրամա...։ Սակայն անկեղծութիւնը պարտք կը գնէ խոստովանելու համար որ խիստ քիչ անգամ գիտած ենք դէպի վերածնութիւն քաշելու, կեանքի բարձրավանդակները մագլցելու և մեր առջև հովանակութեան պողոտան հարթելու միջոցներուն ու այդ միջոցներ ձեռք ձգելու

ազգակներուն մասին խորհիլ որ մուցած ենք ընկու և որ այդ դատապարտելի մոռացումն ալ չ'գիտնալ կ'ենթադրէ, ծիշէ է գաւառի բնակչութիւնը անցեալին մէջ այդ ամէնքին մասին չ'խորհելու պատճառը ունէր։ Այդ պատճառը սակայն ներկայ պոչատ սահմանադրութեամբ մատամբ վերցած համարելով, պէտք է զգանք թէ մարդ ենք ու դիմանաք քաղաքացիական ազնիւ գիտակցութեան գալ։

Մեր յօդուածաշարքը որքան կարելի ամփոփ գծերու մէջ, մատնանշող մը պիտի ըլլայ այն հառեակ ազգակներու որոնք մեր գաւառներու վերածնութեան փառաւոր պալատին քառեակ սիւներն են։ Առանց անոնց կարելի չէ վերածնելու։ Մեր տառապեալ գաւառացին լաղձացուած երջանկութեան հանգրուանը երթալու համար, պարտական է շարունակ ի միտի ունենալ այս հառեակ ազգակներ որոնց քաղցր կը քաշենք այսօր...։

Ատոն լմէ առաջինը և գերագոյնը դպրոցն է որ բառին ազնիւ առումովը իր բարձր նշանակութեամբ իր մէջ կը մտնէ վանդակէ ժամանակակից հասկացողութիւններուն գիտական ըմբռնումներուն լայն շտեմարանը։ Այս բարձր հասկացողութեամբ մեր գաւառներուն մէջ այդ գիտական ըմբռնումները բովանդակող դպրոցներ չկան։ Եղածները թերի են և անկատար, բացի օտարազգի և հայ քանի մը հաստատութիւններէ որոնց կատարած դերը մեր գաւառներու վերածնութեան գործին մէջ յիշատակելի պիտի մնան։ Կան այո՛, այդ դպրոց... պատուական անունը կրող բազմաթիւ հաստատութիւններ մեր գաւառներէն ներս՝ այս ու այն ազգութիւններու կողմէ հաստատուած (մանաւանդ թուրք մեքեայներ որոնք իւրաքանչիւր քաղաքի մէջ յիսնեակներով կը վիտան) սակայն իրականին և գործնականին մէջ անոնք խամբոյներ են, իրենց հակամանկալարժային ընթացքովը, հնամի դաստիարակութեամբը, անդրական ծրագիրներովը և վերջապէս ներկային պահանջներուն անհամապատասխան ուղղութիւններովը...

Երբ ասոնք նկատի կ'ունենամ, մեղադրելի չեմ գտներ անոնք, որոնք երբ կ'ելլեն ուսումը կը նախատեն և իրենց կոյր նախադաշարումներէն մղուած գիտութիւնը կը նահատակեն։ Ոչ ալ իրենց այսպիսի խօսքեր ջրդեղող տրամաբանութիւնը մեղադրելի չէ իմ կողմէ, քանի որ այդքանը միայն արամաքանելու ոյժ կարողութիւն և աւելի ճիշտը իմացականութիւն ունին։ Միթէ անհատը իր միջավայրին արտադրութիւնը չէ... և մենք ստիպուած չե՞նք միջավայրները պատրաստելու, որպէսզի այդ միջավայրները կարող լլլան մարդեր արտադրելու, մարդեր, որոնք կարողանան այդ պատրաստուած գետնին վրայ, իրենց մէջ մարմ-

նաւորած իրական մշակի մը դիւցազնական բոլոր յատկութիւնները, գործել դիւցազնի մը պէս՝ խորիլ տալով լաւագոյնը շարունակ ոչ թէ վաղ որ խտանի է։ Անհատը մեղադրելի չէ և ո՛չ ալ յանցաւոր քանի որ այդքանը խորհիլու կարողութիւնը ունի։ Պատճառը միջավայրն է որ պէտք ունի մշակուելու և պատրաստուելու։ Սա գիտական փիլիսոփայութեան պահանջն է։

Մեր գաւառներուն մէջ դպրոցներ չկան։ Եղածները, գաւառային վերածնութիւն առաջնորդող զօրաւոր ազգակ մըլլալէ հետի կը մնան։ Անոնց մէջ հակամանկալարժական սկզբունքներու բարձր պէտքը անհնդէ զատ, պէտքը կը անհնա ուսման ծրագիրներու հիմնական մարգարդութիւն ուր ժամանակակից ուսումներու։ — Բազաքացիական կոթութեան, Տնտեսագիտական ուսման, Ընկերաբանական գիտութիւններու առողջ դաստիարակութեան, Հոգեբանութեան, Գեղարուեստի մշակոյթի՝ բացարձակ գրիթէ բացակայութիւնը կ'աղաղակէ ի կարգին միւս նոր գիտութիւններուն սրոնք մասամբ կ'աւանդուին հոգ չէ թէ տարրական և հնամի սովորութեամբ...

Նոր ծրագիր մը պէտք է մշակուի և ուր պէտք է սեղ բռնէ, եթէ վերածնութեան դատին ծառայող գաւառական ազնիւ դպրոց մը պիտի ունենանք, մարմնամարգի դասի պարտաւորիչ ուսուցումը՝ որ այսօր խիստ շատ կ'անտեսուի մեր գաւառներուն մէջ՝ մեր կրթական հշակներու կողմէ՝ և որ մանկուսոյն ֆիզիքականը զօրացնելով, կը ստեղծէ տնոր մէջ ընդունակութիւններու և ձիրքերով զեղուն միտքը՝ ընդոյնել տալով այլեւ «առողջ միտքը առողջ մարմնոյն մէջ» ճշմարտաբուր սկզբունքը մեզի, որուն ունկնդրել չ'էինք սիրած գրեթէ մինչև այսօր։

Ժամանակակից գիտութեան հիմնական

սկզբունքները բովանդակող նոր ծրագիրը պէտք է յանձնուի ձեռնհաս անձնաւորութիւններու, որոնք զիտակ ըլլալով իրենց պաշտօնին նուրբ կոչման պէտք է աշխատան մասնագէտ ուսուցիչներ բոլորել իրենց շուրջ, ամենէն առաջ: Մեր գաւառներու պատշաճ, դատարարակութիւնը՝ պէտք է տրուի գաւառային մանկաւանստի սր կը բացակայի մեր կրթական յարկերէն ներս այսօր: Այդ դատարարակութիւնը խիստ անհրաժեշտ է եւրոպայէն չ'զոյութեան արդիւնքն է արդի երիտասարդութեան արտագաղթի մեծ հոսանքը որ օրեւ յօր կ'ընդարձակի: Մեր գաւառացի երիտասարդութեան աչքին, եթէ տեղական արտադրանքն ու արհեստները, խորթ կ'երեւանայ այսօր, ու ան լքելով զանոնք յանձն կ'առնէ ամէն թշուառութիւն և կը պանդխտէ նոր արուեստի մը տարածալու համար օտար հորիզոններու տակ, ունի իր պատճառը: Պատճառն է գաւառական կեանքի պատշաճ դատարարակութեան չ'գոյութեան և չ'գոյութիւնը տեղական արհեստաց, չ'ափուց կշռոյ և անոնց ծագման, ծագիման մասին ամբարէ իր մէջ բոս բուսական պաշար մը: Հեշտ է ամէն պարագայ տակ, գաւառական պատշաճ դատարարակութեան հողին վրայ մեր դպրոցները տեսնելը մեզ մամար և նոյնքան հեշտ այդ դպրոցներէն գաւառացիի հարազատ դրօշմը կրող անհատներ արտադրելը: Ահա այդ ատեն միայն գաւառական դարոյնները ծառայած կ'ըլլան իրենց բարձր կոչման և ազնիւ նպատակին որմէ չ'հուռն այսօր: Մեր այս ըսածներուն իւրեւ միջոյ, հարկ կը համարիմ վարժապետանոյի մը՝ կառուցման պէտքը չ'հետեւի: Այդ վարժապետանոցը պէտք է ըլլայ միջազգային և ունենայ հագեցանական ու մանկավարժական բարձրագոյն դասընթացը: Այդ յարկէն ամէն տարի դուրս պէտք է ելլին, գաւառի վարժարաններուն համար պատրաստուած

վկայեալ մանկավարժ ուսուցիչներ, որոնք իրենց ձեռքին մէջ առնելով կրթական զեկը, ջանան միշտ գաւառին պատշաճ նորագոյն դատարարակութեամբ օժտել գաւառացի մատաղ սերունդը, քաղաքակրթութեան հզօր ստատարը հանդիսացող մարդկութեան այդ չ'քնաղ ծագիկները: Այդ ուսուցիչները որոնց սովը կը քաշեն այս օր մեր գաւառները և որոնց ձեռքը կը քանուի մեր վերածնունդեան դրան ոսկի բանալին, չ'կան և չ'ունինք ակոսն: Մեր գաւառները թափուր են այս տեսակետով: Անոնց կատարելիք դերը խիստ բարձր պիտի ըլլար գաւառի վերածնութեան ներկայ շրջանին, եթէ ունենայինք:

Ըսեր էի դպրոցին ունեցած բարձր նշանակութիւնը: Իրեւ ժողովրդային գաւառային կամ ճիշտ է բնիկ մատուրական վերագործութեան ակոսեան ազդակներ, պարտք կը համարեմ թուել յարանային բանակոտութիւնները, զարգացական կամ կազմակերպական երեկոյթները, թատրոնը՝ որը դպրոցին քոյրը կ'անուանէ Լէօ, հանդէսները և քաջալերական հրապարակային ժողովները, որոնք իրենց կրթիչ ու զարգացողիչ դերը ունին և կրնան նըպաստել փութացմանը մեր գաւառներու վերածնութեանը:

Այս մասին պարտք կը ծանրանայ զարգացած դասակարգին հետ ժողովուրդին վրայ որ շարժի, քանզի անշարժութիւնը մեռելութիւն կ'ենթադրէ: Սերունդները դատարարակել, կրթել, լուսաւորել անհատները, ու անոնց ջերմութիւնովը տաքնալ, այդ անհատին դէպի մարդկութիւնը ունեցած ամենաթանկագին առաքինութիւնն է որ կը սղաւառի ամէն անհատէ և ուր կը կայանայ ապրող մարդուն մեծ արժանիքը: — Այս շարժումը և այս գիտակցութիւնը մեր գաւառներէն ներս ալ:

Ամասիա

ԱՐՄԵՆ ՄԱՆԿՈՒՆԻ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ՄՇՈՅ ՑԱԻԵՐԷՆ

Թէև Մշեցի՝ բայց երկու ամիս Մուշէն հեռու ապրելու բախտը ունեցայ, բախտըն ունեցայ կը գրեմ, որովհետև Մուշ ըսելով պէտք է հասկնայ, բացախաւ հընաց, բարբարոտութիւն, զրկանք և սովաւութիւն:

Վերադարձիս երբ Մշոյ տներ չուկայէն կ'անցնէի, ոչքիս երեցան Մուսա և Գաւրմ հայտնեցնէրը, երազ կարծեցի՝ բայց դժբաղդարար իրադրութիւն էր. նոյն վայրկեանի ապշութիւնս բացապրելու բաւեր չեմ գտներ: Մուշէն մեկնելուս, Մուսա և Գաւրմ պէյերը բռնելու կամ սպաննելու հրամանով, հարկաւար զորքեր զրկուած էին: Ասիկայ կարծեմ թերթերու մէջ արձագանգեց, և թէ ո՞վ չի ճանչնար Մուսա և Գաւրմ պէյերու արիւնոտ կեանքը: Ահա այդ անձերը ներումի արժանացած են: Ինձ անբացատրելի կը մնայ դեռ, թէ ի՞նչ խիղճով ներքին գործոց նախարարութիւնը յիշեալներուն ներում կը չնորհէ, պատճառաբանելով թէ, «Մուսա և Գաւրմ պէյերը եթէ ունին մեղաւորութիւն մը Մշոյ դատարանը թող վկայներով հատուտէ և պատժէ. ինչո՞ւ զորքեր կը զրկուին, զիրենք ստիպելու որ փախուստի դիմեն»: Բայց ես կարծեմ թէ զօրքը արդէն իրենց բարձրագոյն հրամանով զրկուած էր: Սա մի հանելուկ է որը գտնէ Մշեցիներս, չ'կարողացանք հասկանալ:

Ինչո՞ւ ուրեմն բոլոր Քիւրտերը չ'պէտք ուտաղակ լինին, քանի որ տեսան քէօր Հիւսէին վաշանները, Մուսա և Գաւրմները, որոնց գործած արիւնհեղութիւնները ներման արժանացան: Հետևաբար այս ալ նոր մեթոտ է՝ Հայերը ջնջելու և Քիւրտերը խրախոյսելու:

Ընհրական պայխար. — Նախ որ ընտրական պայքար կը մղուի յօգուտ՝ բարեկամութեան ու կուսակցութեան, առանց զիտնարու և մտածելու թէ հասարակութիւնը իր թեկնածուէն գործ և գործունէութիւն կը պահանջէ: Ամէն մէկ թաղ և ամէն մէկ կուսակցութիւն նշանակած է մի մի թեկնածու, բայց տես որ ոչ մէկը այդ առիճանին արժանի է. իսկ եթէ կան մէկ երկու արժանաւորներ՝ անոնք ալ չեն կրցած Դաշնակցական ըլլալ, որով չպիտի ընտրուին: Ինչպէս՝ Յակոբ էֆ. Տ. Զաքարեանը և Մարտիրոս էֆ. Գաւրիէլեանը «Սերաստիոյ արդի Ռուսական թարգմանը. ուրեմն ժողովուրդը թող ըզգայ իր ցուերը»:

ԺԱՅՈՒ

Վ. ԲԵՐՓՐԻԻԻ ԿԵԱՆԲԷՆ

Տեղւոյս մէջ կազմուած է Ս. Դ. Հնչ, Կուսակցութեան կուսակցական դատախազութիւնները ընկեր Աշոտի կողմէ, և որ ունեցած է երկու ներկայացուցիչներ մինչև հիմա՝ մին Հայերէն լեզուով և միւսը թըրքերէն լեզուով: Մասնաճիւղին գոյութիւնը մեզ մեծ յայտը կը ներշնչէ թէ ապագայի տեղացիներուս մեծ ծառայութիւն մը կրնայ մատուցանել:

Ամէն կիրակի, ընկեր Աշոտ կը բանախօսէ սկզբունքային հարցերու շուրջ: Իր կարողութիւնը ամենուն յայտնի է:

Ասկէ քանի մը օր առաջ տեղս ժամանած էր վիճակիս երեսփոխան Փաղի էֆ. որ ամառս Ղին օրթայ-ճամփ կուռւած մրդկիթին մէջ բանախօսած է Իթթիհատի և Իթիլաֆի ծրագրին գանադան կէտերուն վերաբերմամբ, և ծանրացած է Յօդ դոգուածին վրայ: Չէ քաշուած ըսելու թէ

Իթիլաֆը սատանայական խմբակցութիւն մըն է։ Սա աւելի ժողովուրդը մէկզմէկու հետ գտնեցնելու պատճառ դարձած է՝ քան թէ միացման։ Շատ կը ցաւիմ իր գերը սխալած ըլլալուն համար։ Որովհետեւ երեւոյթիւմն իմ պարտականութիւնն է բաշխուցիչ ազդեցութիւններու մէջ համերաշխութիւն սերմանել։

ԿԻԼԻԿԻՄԷՆ

Քօլերան սոսկալի աւերներ կը գործէ Կիլիկիոյ մէջ, որով մեր ՏԱՐԱՍՈՆԻ Գոյէճն ալ այսօր կամ վաղը պիտի գոցուի, և մենք կը ձեկնինք քաղաքէն։

ԿԻԼԻՊԷՆԿ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆՊԱՐՏ ԱՐՁԱԿՈՒԱՅ

Թերթիս արտոնատէրին զէմ բացուած դատի Բրդ զտուարութիւնը տեղի ունեցաւ ամսոյս 10 Դշ. օրը։ Յոգուածներու թարգմանութիւնները ճիշտ գըտնուած էին։ Թէեւ ընդհ. դատախազը ապագրական օրէնքի 16րդ. յօդուածի արտադրութեան համաձայն պատժուիլը պահանջեց. բայց դատարանը՝ թերթիս արտոնատէրին վրայ ծանրացող ուէ պատահանատուութիւն չի տեսնելուն ԱՆՊԱՐՏ ԱՐՁԱԿԵՑ գոյն։

Այս առթիւ, տեղւոյս դատական իշխանութեան անկողմնակալութիւնն աւարդարդատութիւնը՝ գնահատելու պարտքը կ'զգանք։

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժողովրդային բազմաստորագիր հանրագրութիւն մը արուած է տեղւոյս Ազգ. Պատ. Բաղաքական ժողովին որ սահմանողութեան արտադրութեան համաձայն Դպրոցին լուսէն հասկցող գիտակից ու անկողմնակալ Ուսումն. Խորհուրդ մը կազմէ, քանի որ Պատ. Թաղ. Խորհուրդ մեծամասնութիւնը ի վիճակի չէ այդ տեսակ զարմ մը ստանձնելու և օրինական ալ չէ։

ԼՍԱՐԱՆՆԵՐ.

Տեղւոյս Դաշնակցական կոմիտէն, Օսմ.

Երես. ընտրութեան առթիւ, իրենց ըրած բացայայտ յայտարարութիւններուն հակառակ, իրենց Բ. կարգի երկու ընտրելիներու քուէներուն փոխարէն Իթիլահաւէն քուէ չ'կրնալ առնելուն առթիւ, մեր նախորդ թիւին մէջի «կը գովենք իրենց Ազգասիրութիւնը» խօսքերէն զգացուելով՝ ամսոյս 7ին, իրենց գիւպին մէջ լսարան մը սարքելով, կորսուած ժողովրդային համակրութիւնը վերստանալու համար Տօք. Բարունակի բերնով կարգ մը անհիմն ու վրան բաց սուտեր նետեցին Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան հասցէին։ Աւաղ... որ ակնկալած համակրութեան բոլորովին հակառակը գըտան...։

Ամսոյս 15ին Ս. Դ. Հնչակեաններն ալ լսարան մը սարքելով Տօք. Բարունակի բրօյսկասիօններուն յաջորդաբար պատահանեցին ու ժողովրդեան արդէն իսկ ծանօթ եղող ճշմարտութիւններն երեսն հանեցին, Տեարք. Հ. Թապալեան, Մ. Իփէքճեան և Ն. Էվրանեան։ Ժողովուրդը գոհ ապաւորութեան տակ մեկնեցաւ, իր համակրութիւնն աստիճան մը ևս ամեացնելով գէպի Հնչակեան կուսակցութիւնը։

ՇԵՐԱՄԱՏՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԴԱՅԻՆ ՎԻՃԱԿ.

Թթեններն եղեամբ զարնուած ըլլալուն, չերամարտեմերը տակաւին գործի չ'ակսան ու հունտերը դեռ չ'արթնցուցին։

Անցեալ չարթուան տեղացող անձրեւները ժողովրդային կառկածները փարատեցին, բայց քանի մ'օրեր սաստիկ ցուրտ ըրաւ։ Պտուղներու առատութիւնը մասամբ ապահովուած կը կարծուի։

ԶՐԿԱՆԻ ՄԸ.

Ս. Ներսէսեան վարժարանի՝ Կեղր. Ուսումն. Խորհրդոյ կողմէ Դատարարակ-Ուսուցիչի վկայական ունեցող, դատարարակը՝ Յակոբ էֆ. Մեսիահեան, որ իր ունեցած երկուք ու կէս ամսուան չափ կըրած մահացու հիւանդութեան համար

Պատ. Թաղ. Խորհրդոյ կողմէն հրաժարեցուցուած ու իր տեղ նոյն խորհրդոյ ատենադպիրը Մկրտիչ էֆ. Չաքրեանը հրաւիրուած էր: Այս անգամ, Թաղ խորհրդոյ կողմէ իրեն հանդէպ եղած այս զրկանքին դէմ Պատ. Քաղաքական ժողովին բողոքելով՝ ըստ օրինի իր պաշտօնին մէջ վերահաստատուելը պահանջած է: Կիմանանք թէ Պատ. Քաղ. ժողովը Յակոբ էֆէնտիի պահանջը արդարացի գրտնելով յանձնարարած է Պատ. Թաղ. խորհուրդի որ յիշեալը իր պաշտօնին վրայ վերահաստատէ:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՒ ՄԵԿՆՈՒՄ.—

Տէրութի նախկին մէպուս և Հիւրրիյէթ Իթիլաֆի հիմնադիր անդամներէն Լուիֆի Ֆիքրի պէյ և Իթիլատական նշանաւոր գործիչ Տօք. Պահահէտտին էֆէնտիները անցեալ օրեր տեղս ժամանելով և մէկ գիշեր մնալով՝ ուղևորեցան դէպի Պոլիս:

Լուիֆի Ֆիքրի պէյի հետ մեր ունեցած տեսակցութենէն համազում գոյացուցինք թէ քաջ, յանդուգն ու ազատասէր մէկն է: Իթիլաֆներու գլխաւոր մէջ իրեն բարի գալուստի եկողներուն լուրջ ու խոհուն թեկադրանքներ ընելով քաղաքացիական իրաւունքներն ու պարտքերներն ճանչնալ յանձնարարեց:

Բարի գալուստ և բարի ճանապարհ կը մաղթենք երկուքին ալ:

ՍԵՐԱՍՏԻԱՅԷՆ.—

Վերջին պահուն կը գրեն մեզի թէ տեղւոյն Ազգ. Երեսփոխանական ժողովի հրաժարեալ վեց անդամներու ընտրութեան առթիւ, Դաշակեցականները մեծ ջանք թափած են թէև, սակայն Ս. Դ. Հնչակեանները ստուար մեծամասնութեամբ իրենց վեց թեկնածուներն ալ յաջողուցած են:

ՄՐ. ՐՈՒՉՎԵԼՏԻ ՊԱՏԳԱՄԸ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Յ. Գ. էֆ. Կարմիրեան Ամերիկայէն մեկնած ոտներ Մր. Րուզվէլթի հետ իր

ունեցած մէկ տեսակցութեան միջոցին Մր. Րուզվէլթ կ'ըսէ «Հայրենիք վերադարձած ժամանակնիդ ամէն մէկ հայ երիտասարդի բանակին մէջ մտնելով զէնք գործածելու վարժուելը քաջայերեցէք, (այս վերջին խօսքերը զօրաւոր կերպով կ'արտասանէ), այնպէս որ ապագային քրիստոնեայ ազգեր, անոնց վրնավարժութիւն, սուրվեցուցած չ'ըլլարուղ համար, ձեզի չի մեղադրեն: Մեծն Տիգրանի իր հայրենիքը՝ Հռովմայեցիներու դէմ ինչպէ՞ս պաշտպանած ըլլալը չէ՞ք յիշեր»:

(Րահնիւմայի թիւ 16էն)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Քաջունի գեղարուեստանոցին Մարտ 27ին տեղի ունեցած վկայականներու բաշխման հանդէսին մուտքի տոմսերուն թիւերուն վրայ քաջուած 12 կտոր ձեռագործներուն շահող թիւերը հետեւեալներն են:

Շահող թիւեր	Ձեռագործներու թիւեր
289	= 4
232	= 2
184	= 3
52	= 4
48	= 5
133	= 6
139	= 7
423	= 8
207	= 9
230	= 10
275	= 11
242	= 12

Շահողները թող հաճին մենչև Մայիս վերջ տոմար ձեռքերին Քաջունի հօր ներկայանալ և շահած ձեռագործներն ըստանալ, անկէ վերջ ներկայացած տոմսերը չի պիտի ընդունուին:

Եզրպատուի մէջ Ապրիլ 10ին քաջուելիք վիճակահանութեան շահող թիւերն ալ մօտեքս պիտի հրատարակենք:

Առօրինակ՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻԿԵԱՆ

Խմբագրապետ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

سیواس ولایتی معارف مفتش عومیسى نائل
بك افندی شهرى عىزى تشریف ایتشلر و اماسیه ده
اقامت ایده جکدرلر . مومى الیهك اثر همی اولهرق
مرز یقوده بر مکتب اعدادی کشادی تقری ایتشدر
انشالله لوازم معارفه ده بر چوق خدمتلى
سبقت ایدن

**ԱՄԱՍԻԱՅԷՆ «ԹԱՆԻՆ»-Ի ՔԱՇՈՒԱՅ
ՀԵՌԱԳՐԻ ԳԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՄԱՍԻԱՅԻ ԻԹԻՂԱՅԱՍԱՆՆԵՐԸ
Ամասիա 7 Մարտ**

«Հուրրիյէթ և Իթիլաֆի» բարոյական-
ախոյոսներէն Ռատոսիյի Շէվքէթ քանի մը
ընկերներովը Ամասիա եկան . անմեղ ժու-
ղովուրդը խաբել փափաքող այս մարդիկ
երէկ գրչիւր «Իթիլաֆ»ի գլխաւին մէջ
«մտերմական խօսակցութիւն» անուան
տակ կարգ մը լեզուաբարութիւններու
դիմելնուն շամար կառավարութեան մի-
ջամտութիւնը ստիպած են : Հայրենա-
սէր ժողովուրդը խաբելու չ'աջողելին
կռաձող այս մարդիկ յուսալսաք Ամասիա-
լէն մեկնելու կը շարկադրուին : Միւ-
թէսարքի պէչը այս մտաւն ցոյց տուած
փութկառութեան և կորովի շնորհւ քա-
ղաքս անդորրութիւն վերահաստատելու
յաջողութիւնը գովեստի արժանի ծառա-
լութիւն մը շամարելով ներկայ կառավա-
րութեան ղեկսրտակից գանուող քաղաքիս
ըստը ժողովուրդին կողմանէ մեր երախ
տագիտական զգալունները յայտնելու կը
փութանք :

Արաքի Քեան իւր Շիրվանի գահ Ապսու-
րան, Մելիկի Շեյխի ձեռնարկէսին, Մեհմեդի
սիւր գահ Հասուն, Մանդուս սիւր գահ Հասնի,
Տօք. Վիսալիս, Լազարիսիս, Պապարիսիս,
Տօք. ԲԱՐՈՒՆԱԿ. Թեղլաղեան Տիգրան:
«Թանին» Մարտ 9 թիւէն թարգմանուած
Մ. ԽՄԲ. — Այս ղեկավարին բովանդա-
կութիւնը շանրային կարծիքին կը թու-
ղանք

بوكون خريستيا لئلق عالمك نظر خوشنودى
ايه باقدينى اهل صليب حرکتى او وقتك (پاپا)
سى ايکىجى اوربان و بعض راهبر طرفندن مقلا-
صد سياسيه حصولى ايچون ترتيب ايدلمش حر-
کتدن اولدينى تاريخ ارايه ايدرکن سز انى ايچيله
و خريستيانلغه عطف ايديورسکز . بو ايسيه
سزك فاحش ر خطا اولديغندن تصحيح فکر
ايلکىزى عن صميم القلب توصيه ايلره . ايجيل و
انك دينى ادملرک اخلاق و روحانى رفعى امر ايدر
اولوب تاثيرات اقتصاديه و سائر نتيجهسى اولهرق
وقوعه کلان محاربه لر ايله ارتباط ايتز .

شاه عليه بز محاربه حسيات دينيه ايله دکل
حسيات وطنپرورانه ايله اشتراك ايلر اولديغى
صوك دفعه اولهرق بر ده بيا بيان ايلرز .

ترتيب کرده اولان بويانك صرفى ايچون
قيصر بيه قدر اوزون بر بولجىنى توصيه ايتمشکز
حالبو که . . . کي ياقنمده ياغلى مشريلر اولدخيه
قيصر بيه حرکتم ايجاب ايميه چکندن بلکه طرفکره
طوغرى سياحتم ده موافق مصلحتندرز .

مايفازوه طيبانه

غ. ته من مدير مسئولى حيقازون افندينك يكن
ولى الدين بك مقاله سنك ترجمه سندن طولاني ۱۰۰
نيسان سنه ۳۲۸ كوني جريان ايدن محاكمه ده حيقا-
زون افندينك عدم مسئوليتيه قرار ويرلمشدر .
محلى جزا محكمه سنك ذاتاً مسلم اولان عدالت
پرورلكندن طولاني هيئت حاكميه سنه غز ته من
نامنه تشكر لر اولتور . هيئت تحريريه

چونکه عمله یومیه نك ترقیسی فائده لی صورتند قوزه حاصله مانع اولیور. عینی حال بزده دخی واقع در قوزه حاصل ایدن بر بنچوان کندی زحمتی پیراغتك قیمتی و دیگر هر تفرعاتی پاره ایله تقدیر ایدر ایسه پائانس حاصل ایتمک بیله اوندن فائده لی اولایفنی کورر.

صنایع زراعیه من میماننده اك آز اهمیت ویریلان فقط اك چوق ثمره حاصل ایدن طاوخیلق صنعتی در. حریر دارالتعلیمك معاملاتنی توسیع فکرند بولسان اولای امورك نظر دقتی بالخاصه بو خصوصه عاجزانه دعوت ایدرم. سنه حالیه ظرفنده صامسون اسکله سندن ممالك اجنبیه اخراج ایدیلان قوزمك قیمتی ۲۵۰۰۰ لیرادن نقصان اولمش در. بو محصولی میدانه کتیرمك ایچون دیون عمومیه اداره لری فن مأمورلری بیكگرجه بنچوان و تجاران آیلر ایله مشغول اولمشلدر. فقط مذکور اسکله دن اخراج ایدیلان بومورطه محصولك قیمتی ۴۰۰۰۰۰ لیرایه بالغ اولمشدر. و بونی حاصل ایتمك ایچون نه مکتب نه اداره نه مأمور بولمشلدر. ممالك اجنبیه ده و بالخاصه انكلتره و آمریقا ده بر عدد بیله بوجکچیلک مکتبی بولمیدنی حالد یوزلرجه طاوخیلق مکتب لری واردر. بر انگلیز ایستاتستیقی بتون عالمك طاوق و بومورطه محصولك قیمتی تقریباً ۲۵۰ میلیون انگلیز لیراسی اعتبار ایلور و بونك ۱۰۰ میلیون لیرائی متحداً آمریقا ده میدانه کلدیكنی سویلیور. انكلتره چند سنه دن برو تشکل ایدن جسیم طاوق سوه نلر شرکی دیپلومات شهر مارکیز سالزبورینك زوجه سی ریاستی التنددر و اعضالری میماننده اون سکر عدد محترم لوردلر موجوددر. بزم اك زیاده حصر دقت ایده جکمز مواد فقیر اهل زراعتك جنبه چوق پاره کتیرنلدر. اگرچه حقیقه مکتبك معاملاتنی توسیع و تزیب ایدیه جك ایسه اك اول الماخیلک (Pomology) و صکره طاوخیلق (Poultry) شعبه لرینك کشادینه بذل همت ایدلمنی آماسیه بنچوان و فقر اسنك عمرانی نامه توصیه ایدرم.

آ. قره ما بانه

عکس صداده آماسیه لی ژ. فیه
اولجه سزی یالکز جاهل ظن ایدیور ایدم
بودفمه بر الحاق اولدینکزه ده قانع اولدم.

بر مخبره مالك اولمكزدن طولایی شایان تبریک
سکر. چونکه غزته کز انجیق خبر موسی الیه؟ ایله
اهنگی بوله یلشمشدر.....
انجیل و انك دیننده جهادی اسر ایلیان بر
کلمه بیله بولمیدفنه دائر بیاناتره قارشو قرون
وسطی صلیبون حرکتی ذکر ایلورسکر که بو-
نك ایله تاریخ مطالعه سنده قوه تفکر به کزك پك
نقصان بولمیدنی ظاهر اولور.

عکس صداده اوزی طوغری

صدق اغایه

غایت محترم و ناموسلی اولان؟؟ ژ. ف. کبی

ایتمکه استعداد طبیعی سی اولان بر موقعه بودرجه احماللق و تنبلمك فصل ممکن اولاییلور. بونلردن
 ریسی «شم یکرمی بش دسیاتینک (۲۵۰ دوشم مقداری) بر المالم وار سنهده ۱۲۰۰۰ منات (۱۴۰۰
 لیرا قدر) حاصلات صافیه وار» دیدی. بو افاده سی بزه موجب حیرت اولدیفنی کویه مومی الیه شو
 یولده الاوه مقال ایلدی «افندی، تعجب ایتمک بزمکه بر شی دکل شهر یزده المادن سنوی اون بیک
 دن اوتوز بیک مناته قدر حاصلات الان بفعوانلر پک چوقدر. افرامدن بر ذات کچن سنه باغلر-
 بیک الماسی آغاچلری اوستنده ۵۰۰۰۰ مناته صادی. بز الما اغاجنی اولاد بیوتور کی میدانه کتررز
 بزدن الک جاهلی بیلیر که الما آغاجینک اون اوچ توع بوجکی وار بونلردن اوچ نوعی کوکنده بولنور،
 الی نوعی یابراق و میوه سنه ضرر ورر درت نوعیده وجودینه و دالرینه تعرض ایدر. بز بونلرک
 هیچ بریسندن فورقاز چونکه انلرک وقت ظهوری و صورت تحریری بزه پارمقلمز قدر معلوم دره
 بر بفعوانک اولادینک باشنده کهمه بولنامی نه قدر عیب ایسه آغاجندهده بوجک بولنسی او قدر
 عیب در» بزم غیرتلی بفعوانلرمن شو حکایه بی نظر اعقاره الورلر ایسه کنیدیلرینی عیبا نه درجه
 مترقی کوررلر!

آماسیهده موجود صنایع زراعیه نیک ایکنجی - و چوققلری غندنه برنجیسی - بوجکچیلک
 صنعتی دره بونک نه درجه محتاج ترقی اولدیفنی اکلانه بیلیمک ایچون شو قدرینی عرض ایدیم که وقتیه
 یوز بیک عتیق باطمان قوزه حاصل ایدن آماسیه و حوالیسی ایوم انجق ۲۰۰۰۰۰ کیلو مقداری
 چیقاریور. قوزه و تخمک شمیدی فیثاتلری باقی اولدق بوجکچیلک آماسیهده هیچ بر وقت اسا
 سی حاله واصل اولور دیو تخمیل ایداز. بر سنه مقدم کشاد ایدیلان حریر دارالتعلیمی قوزه چی
 و تخمچی بیتشدرمک خصوصده موجب محسنات اولاییله جکی طبیعی دره فقط بوندن الک زیاده استفاده
 ایتمی لازم کلان بفعوانلریمزک قسم اعظمی بویه بر مکتبک کشادندن بیله خبردار دکل درلر ظن
 ایدرم. بر قسوطی تخمدن یکرم برش کیلو محصول الهرق «نه یاهلم الله بوقدر ویردی» دیان
 بفعوانلر ایکی مسئله اوکرتمه سی لازم کلیر. برنجیسی بیلملیدرکه صنعتک نظریه و عملیه سی ایی سیلان
 قومیشی بر قوامودن سکسان کیلو محصول آلیور و ایکنجیسی جناب الله کنیدی قولنک کناهلر-
 بیک جزاسنی انک بوجکخانه سنده ترتیب ایتمز.

مسموعات نظراً مکتب مذکورک معامله سی تدریجاً توسیع باغجیلق و بفعوانلق شعبه لری دخی
 علاوه ایدیه جکمش، بوخبر طبیعی شهریمزک عمراتی ارزو ایدلرجه بیوک مسرتی موجب اولور. و
 بو مسئله نیک فوهدن فصله کلمسنه کال اشتیاق ایله بکلرلر. بو صورته ظن عاجزانمه کوره قوزه
 جلیقدن ده زیاده اهمیتلی اولان میوه جیلک صنعتنه حصر دقت ایدیلور. اییک معمولاتنک عالم مد
 نیمه مرکزی صاییلان فرانسهده قوزه محصولی تدریجاً ازالیور بوکا مقابل باغجیلق ترقی ایدیور،

آماسیه

طشره منادیسی

برنجی سنه

۱۵ نisan سنه ۳۲۸

نومرو ۳۲۹

آماسیه ده صنایع زراعیه

شهریخز اهالیسنک قسم کلیسی صنایع زراعیه دن معدود اولان بو جکیلیک و بنجوانلق ایله و دیگر بر قسمی ده بالذات ویا بالواسطه زراعت عمومییه ایله مشغول بولندقلرندن رنجبرلکده هر هانگی بر شعبه سی حقنده اولور ایسه اولسون یازیله جق مقالهلرک حسن قبول و مراقبیلری طرفندن اوقته جی طبیعی اولسی اعتباریله اشبو مقالهلک ترتیدنه مسارعت ایلدم.

میسکت الماسی چوق یرلرده بولنه بیلور ایسه ده ظن ایدرسک اناطولی داخلنده مسکسک طبیعی وطنی آماسیه در. بو نوع المانک قلملرندن چند سنه مقدم آمریقایه دخی کوندراش و اوراده آغاج شکلی الوب میوه حاصل ایتدکدن صکره شایان تقدیر اولمشر.

بنجوانلرمزک جهالتی سایه سنده آماسیه نك انك مهم محصولی اوله سیله جک بو لطیف و لذیذ میوه سنه دن سنه به ازلمقده، آغاجلر قورومقده، انلرک یاراقلری طیرطیرلر طرفندن محو ایدلمکده در. الیوم آنجق بر قاچ بیك لبرا منفعت ویرن بو محصولک تجارتی ایله مشغول اولان تجاران اعتراف ایدرلرکه اگر چه المانک بیولکی یولنده اولسه و چایق چوریمه سنه سبب اوله جق زده و اککلری بولنسه هم فضله قیمت ایله صاتیورلر همده مقداری نه قدر چوق اولسه متعدد موقعلرده مناسب تجارتله الدن چیقاریله بیلور.

انئای سیاحتیمده باطومده قریمک سیمفروپول شهری اهالیسندن وقارائیم تعیر اولسان یهودی قومنه منسوب ایکی میوه تجارینه راست کلدیم. بو ذوات دیگر بر آماسیه لی همشهرینک النده بولان مسکک الماسه حیران اولدقدن صکره آماسیه بنجوانلانی و خصوصیه الما محصولی حقنده بزدن استفسار معلوماته قالشیدیلر. بز طبیعی بر درجه اوتانه رق بزم میوه جیلکله مشغول اولانلرمز حقنده اعطای معلومات ایلدک بیچاره ادملر هیچ بروجله اکیه مدیلرکه اول قدر کوزل الما حاصل

Փ. ՀԱՅ-ՔԻ ԱԶԳ. ՊԱՇՏ. ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ.

Այն բոլոր Ազգ. պագոսնական մարմիններն որ մեր ներկայ 1317-ի քիւի խմբագրականը կարգալէ յետոյ կ'ուզեն մեր միջոցաւ Տեսուչներ, Տեսչուհիներ. Ասուցիչներ, Ասուցչուհիներ ու Մանկապարտիզպանուհիներ հայ-բայրել. քոյ բարեհաճին գրել մեզի ք'ն:

4.— 1^նճ Տեսուչ Կաթոս՝ հայ կ'ուզեն, ի՛նչ գործի եւ ի՛նչ նիւղերու համար.

2.— 1^նճ պարեմներ ունին: Եւ այլն:

ՈՒՍՈՒՑՈՒԹԵԱՆ.—

Նոյնպէս բոլոր այն՝ Տեսուչներն ու Տեսչուհիներն րբ, Ասուցիչներն ու Ասուցչուհիներն ու Մանկապարտիզպանուհիներն մեր ներկայ խմբագրականը կարգալէ յետոյ մեր միջոցաւ պագոսն ձեռք բերել ուզողներ քոյ խմբագրականը գրել մեզ՝

4.— Բնիկ որ Տեղացի են, ո՞ր դպրոցէն շրջանաւարտ են. Բանի՞ք տարի է ի՛վեր պագոսն կը վարեն եւ որ տեղերու մէջ, ի՛նչ նիւղերու համար նախապիտիւններ ունին:

2.— Բարեւոք պագոսնապարտեան ու Ասուցչուհիներն իջայական ունին:

3.— Ո՞ր տեղերու մէջ կ'ուզեն պագոսնալարել. ի՛նչ տեսակ պագոսններ. եւ ի՛նչ պայմաններով: Այլմ ո՞ւր կը գտնուին.

—ԽՄԲ.—

Ծ. Խ.— Ինչպէս խմբագրականին մէջ ա՛յլ բաւած է Փ. Հայրի շրջանակէն դուրս ա՛յլ ելած դիմումներուն գոհացում տալ պիտի ջանանք:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԲ.—

ՀԱՅ ԴԻԻՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ.—

1859ին Փարիզ հրատարակող Արեւելք լրագրէն տրաստատուած: Բ. տպագր. 1912 թին 42 տկեր. Կարծե կարդալ, գեղեցիկ զ'եղիլ մընէ:

Ստանուլու համար պէտք է դիմել

Mr. Portoukalian

Marseille (France)

ՎԵՐԴԱԿ

Տեսուչ Ա. Մանկուկի յոյուածին (էջ 209) 21րդ. ուղէն սկսեալ պիտի Ըլլայ «Զ'գոյուրիւնը եւ Զ'գոյուրիւնը տեղական արհեստից, չափուց, կտորաց եւ անոնց ծագման ծաղկման մասին քննարակ տեսութեան: Պէտք է գաւառացի մանուկը այս բոլորի մասին ամբարէ իր մէջ քոս բաւականին պագար մը»:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

Ս.ՄՍ.ՍԻՍ.



Ոսկի գործուն եւ պրիճ նաեւ սեղիւ-շոյս արհեստական լատմներ շինելու Ամերիկեան մեքոսը սարկիլ ուզող բոլոր ատմաբոյժներու կը յայտարարէ քէ ինք պագոսն է ապ մեքոսը սարկեցնել նպատակաւ պայմաններով:

سیغورطه جی

سیمون فاروقیان

آماسیه

آلیانسه عمر سیغورطه سی لاتقاشه حریم

سیغورطه قومانیه لرینک اجتنی در.

مناسب شرائط له هر نوع سیغه، طه ابشاری

یاپاره. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان ارتین اغا دکانتک اتصلنده باتمانی

۵۰ (اللی) یارهیه معدن کوری صاتیور

هر کس فرصتدن استفاده ایتسون.

ՓՈՒԹԱՅԷ ԱՆՄԻՋԱՊԵՍ

ԴԻՍԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

ԶԻՆՍ. Վ. Ա. ՀԱՌԱՆՈՑԸ

ԲՍ.ԼԸԳ. ՊԱՇԸ—ՍԱՄՍՈՆ

Կը վանառե ամեն կարգի ու ամեն տեսակ փառիպուտ 0 | 25 գեղջուլ: Թող դիմեն, բոլոր առիթէն օգտուլ գիցողները վասան բլլալով քէ իրենց շահը նկատի պիտի առնուի միշտ: Օ՛ր փորձեցեք եւ համոզուեցեք:

ԱՄԱՏԻՅԷ

شرائط اشترا
بر سنه لکى بر مجيد
اللى آيلنى يارم مجيددر

صاحب امتياز و
مدیر مسئولی
حایقازون طبیبیان

سر محردى مناس 'يکجيان ياخود

طشره مناديسى

سیاسی فی ادبی اقتصادی و اخلاقی عزته در
هر اون بش کونده بر نشر اولدور

نومرو ۱۳

۱۵ نیسان ۱۳۲۸

برنجی سنا

محتویات

اماسیهده صنایع زراعیه
اوزی طوغری به جواب
۱. قردهمانیان
حایقازون طبیبیان
شئوات لوا

مطبعه مزده ترکیه ارمنیجه رومیجه فرانسیزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،
اوراق تجارتیه، قارت ویزتله، مکتوب باشلی، کتابله، غزتلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکانه من محترم مشتریلرمیزی ممنون
قلماق در. هونانیان و یاردیمیان شرکاسی

Տպարանին մէջ Տանկերէն, Հալերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլիերէն լեզուներով ամէն տեսակի Ազդեր, Վաճառականական թղթեր, Քարտ վիզիթներ, Նամակադրուիւմներ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ նաւաստան կը տպագրուին:
Միակ նպատակն է զոն թողուլ յարգելի յանախորդները:

ՅՈՎՆԱՆՆԱՆ ԵՎ ԵԱՐԴԻՄԻԱՆ

آماسیهده

مطبعه هونانیان و یاردیمیان